Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-138[1]-03.10.2017-ԱՍ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ուժը կորցրած ճանաչել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ գլուխը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի «անապահովության աստիճանը գնահատելու» բառերը փոխարինել «սոցիալական գնահատման» բառերով:

Հոդված 3. Օրենքի 13-րդ, 16-րդ եւ 22-րդ հոդվածների 1-ին մասերի «Ընտանիքների անապահովության» բառերը փոխարինել «ընտանիքի սոցիալական» բառերով:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել նոր 1.1 մասով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող են սահմանվել ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմաններ:»:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.1 կետով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմանների վերացման դեպքում.»:

Հոդված 6. Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել նոր 1.1 մասով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող են սահմանվել սոցիալական նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմաններ:»:

Հոդված 7. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.1 կետով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված սոցիալական նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմանների վերացման դեպքում.»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: *Մինչեւ պետական նպաստների իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:*

Կ-138[1]-03.10.2017-ԱՍ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ուժը կորցրած ճանաչել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ գլուխը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի «անապահովության աստիճանը գնահատելու» բառերը փոխարինել «սոցիալական գնահատման» բառերով:

Հոդված 3. Օրենքի 13-րդ, 16-րդ եւ 22-րդ հոդվածների 1-ին մասերի «Ընտանիքների անապահովության» բառերը փոխարինել «ընտանիքի սոցիալական» բառերով:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել նոր 1.1 մասով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող են սահմանվել ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմաններ:»:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.1 կետով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմանների վերացման դեպքում.»:

Հոդված 6. Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել նոր 1.1 մասով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող են սահմանվել սոցիալական նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմաններ:»:

Հոդված 7. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.1 կետով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված սոցիալական նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմանների վերացման դեպքում.»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: *Մինչեւ պետական նպաստների իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:*

Ամփոփաթերթիկ

Առաջին ընթերցմամբ ընդունված «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
Կ-138-03.10.2017-ԱՍ-011

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
Կ-138[1]-03.10.2017-ԱՍ-011

առաջարկության հեղինակ	հոդված	առաջարկության բովանդակությունը	եզրակացություն
ՀՀ կառավարություն	««Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 5 օրենքի 24-րդ հոդված	1. ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի կարգավորումների լույսի ներքո և հաշվի առնելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթները, համաձայն որոնց՝ սոցիալական աջակցության վերաբերյալ *կամավոր խնդիրները* լուծվում են *համայնքի ավագանու սահմանած* չափորոշիչներով, ինչպես նաև 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթները, որոնց համաձայն՝ *համայնքի պարտադիր խնդիրներից է* համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը՝ առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նախատեսվող փոփոխությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների իրականացման շրջանակներում»:»	Ներառված է
	««Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետու	2. Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասում «համար»,» բառից հետո և 2-րդ մասում «անձի,»,» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «բառերը» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթները:	Ներառված է

	թյան օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 10 օրենքի 40-րդ հոդված		
	««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 8	Նախագծի 8-րդ հոդվածը լրացնել «Մինչև պետական նպաստների իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:» բառերով	ներառված է, առաջարկությունը պայմանավորված է նախագծի ընդունումից հետո մինչև ՀՀ կառավարության կողմից օրենքի կիրառումն ապահովող որոշումների ընդունում՝ նպաստների նշանակման և վճարման բնականոն գործընթաց ապահովելու անհրաժեշտությամբ: